

ՅԱՋԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՂԱՆԱՅ ԿԷԶԻԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 23 ԱՊՐԻԼ 1911

ԹԻԻ 15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ԳԻՐԳԷՆ ՑՈԼԻՔԵՐ. — Մարդկութեան մեծ
բարեկամին սէրը

Յարուծիւն

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Յակոբ Սրճեցի

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ. — Համապատում

Ինկած Բոյնը (Բերթուլաճ)

Աստուած եւ բնութիւնը. — Միտքի կաթիլներ

Ուսանողաց Համաշխարային Քրիստ. Դաշնակցութիւնը ԽՄԲ.

ԲՈՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ. — Տեսակցութիւն մը Տ. Եօաքիմ

Սարկաւազի հետ

Յուզումը Հայ-հռոմէական հասարակութեան մէջ

Կարեւոր Մոռացում մը

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան կարեւոր լուրեր

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՄԿՐՏԻՉ ՔՀՆՅ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Դ. ԳԱՊԷՆՃԵԱՆ

ԲԱՐԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԴՊՐԵՎԱՆՔՅԻ

ԿՈՒՄՍԻ ՔՀՆՅ. ՖԻՐԴԱՅԵԱՆ

»

»

ԵՂԻՇԷ ՔՀՆՅ. ՅԱՐՎԱՌՈՒՆԻ

Ծագող. Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

Սուրբան-Համար Մօրա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ

ARMENIA

Ամերիկացի նշանաւոր գրագէտներու եւ գրադիաուհիներու աշխատակցութեամբ Ամերիկայի մէջ կանոնաւորաբար հրատարակուած գեղեցիկ պարբերական մը, որ կը պաշտպանէ նաեւ Հայոց շահերը՝ ծանօթացնելով Հայ ազգին գրականութիւնը եւ պատմութիւնը անգլիախօս ժողովրդին:

Armenia-ն կը պարունակէ այնպիսի գրական զմայլելի էջեր, որոնք հաւասարապէս կը շահագրգռեն թէ՛ Հայ թէ՛ Ամերիկացի հասարակութիւնը:

Ահա՛ թէ ինչ կ'ըսէ Նիւ-Եօրք Էյմէրիքըն հանրածանօթ օրաթերթին գրական բաժնի խմբագրապետը:

—«Armenia-ն, որ Արեւելքի չափ պայծառ ու վճիռ գրականութիւն մը կը ցոլացնէ, Վրացիայ յաջողակօրէն բազմապատկիւ Ամերիկեան գրական Հանդէսներու հետ, արդիմանաւ որ վերջիններէն պակսեցուի զիրենք նսեմացնող վաճառականական ոգին»:

Գօլէճներու եւ բարձրագոյն վարժարաններու մէջ անդիլներէն լեզուի դասընթացքին հետեւող բոլոր գրասէր ուսանողներու ջերմապէս կը յանձնադարուի այս հոյակապ պարբերականը, որուն տարեկան բաժնեգիրն է միայն մ'կ տուար Ամերիկայի, եւ տղարուկէս Թուրքիոյ համար:

Դիմել՝ Editor of Armenia

P. O. Box. 201 Madison Square Station
New York City

Ապառիկ ապսպրանքներ նկատի չեն առնուիր:

ՀԱՄԱՊԱՏՈՒՄ

Չորս Աւետարաններուն պարունակութիւնը՝ օտարաբերով, եւ համաձայնելով եւ բացատրելով պատմութիւնը. — Պարզաբանեց՝ Մաղափա Արեւիկոպոս Օրմանեան, (նախկին Պապրիարք). — Հրատարակիչը՝ Վ. եւ Հ. Տ. Ներսէսեան, Կ. Պոլիս, 1911: Դին 25 դր. լաթակազմ:

1100 ստուար էջերէ բաղկացեալ ընդարձակ հատորի մը մէջ նախկին Պապրիարք Ամեն. Տ. Մաղափա Ս. Արքեպ. Օրմանեան ամփոփած, դասաւորած եւ ամբողջացուցած է Լոյս կրօնաթերթին մէջ սկսուած եւ յետոյ Արեւելքի մէջ շարունակուած յօդուածներու շարքը: Հեղինակին գլխաւոր նպատակն եղած է, կերպով մը ժողովրդականացնել Աւետարանը, այսինքն հաւատացեալ ժողովրդեան կարողութեան, ձեռնհասութեան յարմարընել: Հատորին մէջ կը պարզուին ոչ միայն պատմական, վարդապետական, դաւանական տեսութիւններ, այլեւ ժամանա-

կագրական, տեղագրական, հնախօսական, գրչագրական եւ լեզուաբանական տեղեկութիւններ: Անհրաժեշտ գիրք մը ամէն ճշմարիտ հաւատացեալի, մասնաւորապէս եկեղեցական պաշտօնէից, եւ մանաւանդ քահանայական դասու ստուար մեծամասնութեան, որ ատոր մէջ պիտի գտնէ Աւետարանները ամփոփող եւ լուսաբանող ամէն տեսակ տեղեկութիւններ՝ առանց այս ու այն կողմ թարթափելու: Հատորը ճոխացած է երկու բացատրական քարտէսներով (Պաղեստին եւ Նրուսաղէմ), եւ երեսունէ աւելի պատկերներով:

ՀՄՍԵԱԿ ԲԶՆՅ. ԷԲՍԷՐԵԱՆ

ՏԱՐԵՐԲ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՋՈՒԻ

Ա. Բ. Գ. ՀԱՏՈՐ

Հարիւրից 40 զեղչ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ ՓԱՓԱՋԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Սիւմպիլիլի Խան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 23 ԱՊՐԻԼ 1911

ԹԻԻ 15

Ս. ԳԻՐԲԷՆ ՑՈՒՐՅԵՐ

ՄԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄԻՆ ՍԷՐԸ

«Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի,
եւ ի դիցե զանձն իւր ի վրայ բարեկամաց
իւրոց:»

Յովթ. ԺԵ. 11

Բարեկամը, ա՛հ, անկեղծ ու անձնա-
ղո՛հ բարեկամը՝ ո՛րքան հաղուագիւտ ու
թանկագին է. անոր սէրն ալ հզօր ու
քաղցր է միւս սէրերուն պէս: Անկեղծ
բարեկամը՝ մեր կեանքին ճշմարիտ ըն-
կերն է, աւանդապահը մեր սրտին էն
թագուն գաղտնիքներուն, ու մեր վշտե-
րուն վշտակիցը: Անի մեր մանկութեան
օրերուն ծաղիկն է անմեղաբոյր. մեր երի-
տասարդական երազուն ու եռանդուն
օրերուն սրտակիցն ու խորհրդակիցը, իսկ
մեր ծերութեան հին օրերուն՝ ամենէն
լաւագոյն, ամենէն հաւատարիմ խօսուն
յուշարձանը: Անձնուէր բարեկամներու
մասին, ո՛րքան սրտայոյզ պատմութիւն-
ներ գիտենք:

Մեր սրտերուն վիշտերն ու ցաւերը ո-
րո՞ւ կը բանանք, որո՞ւն կը հաղորդենք
մեր ուրախութիւններն ու յաջողութիւն-
ները. չէ՞ մի օր մեր սիրած անկեղծ ու
ճշմարիտ բարեկամներուն: «Բարեկամու-

թիւնը սպեղանի մըն է որ կ'ամօքէ կեան-
քին վիշտերը» (Ժողովող):

Եթէ նիւթական ու անձնական շահա-
սիրութիւնն է որ երկու սրտերը բարե-
կամ ձեւացուցեր է իրարու, այդ բարե-
կամութիւնը սակայն շատ շուտ կրնայ
թշնամանքի ու ատելութեան փոխուիլ.
Երբ շահը վերնայ՝ մարդը կը դառնայ
մարդուն համար անշահ ու անպիտան բան
մը: Բայց երբ անշահախնդիր սէրն է որ
սրտերը կապեր է իրարու, աշխարհի ոչ
մէկ դժբաղդութիւնը կրնայ բաժնել ի-
րարմէ: «Բարեկամներ կան որ դրամի կը
նմանին, հարկ է զանոնք գործածելէ ա-
ւելի փորձել. բայց այդ փորձը ընելու
համար պէտք է սպասել այն վայրկեա-
նին, ուր պէտք պիտի ըլլայ անոնց ծա-
ւայութեան» (Պլուտարքոս):

Ո՛րքան մեզի բարեկամներ ձեւացողներ
կան, որոնք իրենց շահուն համար կը գո-
վեն, կը ծափեն մեզի, մանաւանդ երբ
մենք դիրքի ու փառքի մէջն ենք: Բայց
երբ մէյ մը իյնանք, կամ դառնայ մեր
բաղդին անիւը, ո՛հ մեր կեղծ բարեկամ-
ները այլ եւս չեն երեւիր մեր շուրջը:
Ճշմարիտ ու հաւատարիմ բարեկամը այն
է, որ մեր հետը կ'ըլլայ անբաժան՝ բաղ-

զը կամ ժամանակը ինչ վիճակի ալ ենթարկէ մեզի:

Մարդկութիւնը՝ իր բոլոր բարեկամներուն մէջ, ունեցաւ միակ ու անգուգական բարեկամ մը՝ մեծ ու անձնագոհ՝ որուն նմանը դեռ չէ երեւցած ոչ իրմէ առաջ և ոչ ալ պիտի կրնայ երեւնալ իրմէ ետքը այս աշխարհի վրայ: Ան ըսաւ որ մը իրեններուն. «Դուք իմ բարեկամներս էք», ու իր վերջին օրերուն ալ դարձեալ կրկնեց անոնց իր բարեկամական սիրոյն մեծութիւնը. «Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր զիցէ ի վերայ բարեկամաց իւրոյ»: Յիսուս բարեկամ կը կոչէ իրենները, բայց իր կեանքը ոչ թէ միայն անոնց սիրոյն ու փրկութեան համար կը զոհաբերէ, այլ բոլոր մարդկութեան: Անոր բիւրիցս պաշտելի շրթներն էին որ մահամերձի պահուն իսկ աններող մարդկութեան հանդէպ ներողութեան աղօթքը մոմշեցին. «Հայր, թող դոցա»: Աս սիրոյ ու ներման բարձրագոյն աստիճանը՝ երբեք տեսնուած չէր մարդոց բարեկամներուն մէջ: Աս վերջինները կը սիրեն զանոնք որոնցմէ կը սիրուին փոխադարձաբար, կը ներեն անոնց որ ներող կ'ըլլան իրենց: Յիսուս սակայն սիրեց զանոնք որ տեսցին զինքը, աղօթեց անոնց համար որ խաչեցին զինքը իբր ոճրագործ մը: Ան սիրեց այնպիսի մեծ սիրով մը, որով ոչ ոք սիրած էր մարդկութիւնը. ամէնէն զսեմ, ամէնէն բարձրագոյն սէրն է ասի սրտին, որուն միայն կրնանք ըսել ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՍԵՐ. ու աս սուրբ սիրով ոչ մէկ մահկանացու բարեկամի մը սիրտն է բարբախտ:

Այս մարդկութեան մեծ բարեկամին սիրոյն ցայտուն գիծերուն նայեցէք, որ կը ցոլանան ոչ միայն թափորական լերան բարձունքը՝ այլ Գողգոթայի հոգեհարստու սարին վրայ. առաջինին վրայ գիտէք որ, տեսարանը որքան գեղեցիկ էր ու ակնահաճոյ, ուր կաթնաթոյր ամպեր լուսեղէն պսակ մը հիւսեր էին իր Աստուածային անբիծ ծակտին վրայ, արեւն իր պէսպէս գոյնկրով ծիրանի փունջ մըն էր դրած անոր գլխին վրայ, Անոր աջ ու ձախը

կ'երեւնային երկու հոգիներ. մէկը Խորայի տառապեալ ժողովուրդին ներկայացուցիչն էր. իսկ միւսը Յեղաբէլէն հալածուած մարգարէն:

Դարձուցէք սակայն ձեր աչքերը միւս կողմը՝ դէպ ի Գողգոթայի կառափնատը: Օ՛հ, հոս տեսարանը ահաւոր է, ու հակապատկերը թափորականին. հոս ոչ ոք կ'երեւի Անոր շուրջը, բաց ի երկու չարագործներէ, որոնք կարծես չարագործ մարդկութեան ներկայացուցիչներն էին: Տեսէ՛ք, կոշտ փայտի մը վրայ գամուած է մարդկութեան ճշմարիտ բարեկամը, ուսկից կարծես դեռ կը մրմնջեն իր մահուան դալուկն հագած շրթները, «Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր ի վերայ բարեկամաց իւրոյ»:

Ինչ որ չէր կրնար սորվիլ մարդը մարդէն, Յիսուս զայն սորվեցուց մարդուն: Անոր այս Աստուածային սիրոյ ու անձնագոհութեան պատկերը, մարդկութիւնը չպիտի կրնայ ջնջել իր կեանքի պատմութեան էջերէն:

Աշխարհի բարեկամութիւնը, աշխարհի ըմբռնած սէրը՝ ահագին ու անջրպետային տարբերութիւն ունի Յիսուսի ցոյց տուած բարեկամութենէն ու սուրբ սէրէն. սէր մը, որ հոգին չի տառապեցներ, այլ կ'երջանկացնէ. որ չի հիւժեւ սիրտը այլ կը պարարէ, չի մահացներ մարդը այլ կ'անմահացնէ:

Դարեր պիտի անցնին, սերունդներ իրարու պիտի յաջորդեն, բայց քրիստոսի կեանքին երեք նշանաւոր կէտերը պիտի մնան իբր յաւիտենական կեդրոններ մարդկային կեանքի պատմութեան մէջ. — Անոր ծնած անշուք փայտը, անոր գամուած արիւնոս խաչը, անոր քափուր գերեզմանը, որոնք անբարբառ վկաները պիտի ըլլան իր Աստուածային մեծ սիրոյն:

Անոր անշուք մտերի քովէն շարունակ պիտի ծառագայթէ անշէջ լոյս մը՝ լուսաւորելու համար իմաստուն կարծուած աշխարհի իմաստակներուն միտքը: Ան ցոյց պիտի տայ մեր կեանքին միջին անա-

պատին մէջէն ճամբայ մը, որ ճշմարտութեան ճամբան է, Անոր խաչէն պիտի հնչէ իր Աստուածային սիրոյ ձայնը գորեղ թէ՛ «մեծ եւ քան զայս սէր ոչ ոք ունի եթէ դիցէ զանձն իւր ի վերայ բարեկամաց իւրոց»։ Անոր թափուր գերեզմանէն շարունակ պիտի արձագանգէ ձայն մը հոգեցունց մեղ մահականացունքունք թէ՛ «Ձիւ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս»։

Ո՛վ տէր, դու սիրեցիր քու Աստուածային սիրովդ ու սրտովդ ինչ որ մարդիկ ատեցին, դու սորվեցուցիր ճշմարիտ անձնազոհ բարեկամութիւնը խաչի կեանքովդ։ Դու բարեկամ ու ընկեր կոչեցիր այն ամէնքը, որոնք մարդկային ընկերութեան մէջ մեծ գերդաստանի մը չէին վերաբերիր, քու խաչդ եղաւ մեր կեանքին սիրոյ ու եղբայրութեան խորհրդանշանը, քու մահդ եղաւ մեր անմահութիւնը։

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՅԱՐՈՒԹԻՒՆ

Յարութիւն, հրապուրիչ՝ բառ, Հազար ինն հարիւր տասն եւ մէկ տարիներու երկարածիք շարք մը ոսկեգոծած, նուիրագործած է այս սրբազան եւ վեհամաստ բառը, յորում կը բովանդակի վսեմ յոյգիրու, չողջողուն յոյսերու, բոցավառ արեւներու, խոփալ երեւակայութեանց ամբողջութիւն մը։ Կեանք բոյսին, կեանք ծաղիկին, կեանք սիրերգակ սոխակին, կեանք վարդին, կեանք համայն բնութեան, տիեզերքին, կապոյտ երկինքին գունազեղ երկրին, կենսանորոգ օդին, կեանք... անկեալ մարդուն։

Ահա յարութեան նշանաբանը։ — Գողգոթայի վրայ բարձրացող սեռակնիւտձեւ քառաթեւը, բոսորագեղ կանգնած, աւետեց ապականուած մարդկութեան նորոգ կենդանութիւնը, տառապած մարդուն չընչեց ապրելու յոյսը՝ փոխան մահաբեր ծառին։ Խաչուած մարդ-Աստուածը իրականացուց խաչին աւետիսը վերցուց ու չընչացուց մահապտուից պատժաբարձ

գործին, անոր տեղն ընծայելու Փրկարար Խաչը։ Սերովքէներ ու քերովքէներ յերկիր խոնարհած հրճուազին կը գոչեն. «Ո՛վ մարդիկ, ինչո՞ւ յուսահատ կը կենաք, ինչո՞ւ կենդանին կը փնտոէք մեռելներուն մէջ, խաչուող ու թաղուող Տէրը յարեալ, չէ՛ աստ։ Անբաւելիին չէր բաւեր դամբան մը, ամբաւ տիեզերքը հազիւ կըլնայ պարփակել զայն. քանի՜ անմտութիւն՝ փնտոել զինքը ցուրտ քարի մը ներքեւ ուր մահն ու խաւարը կը տիրեն։ Գընացէք Գալիլիա եւ հոն պիտի տեսնէք զինքը»։

Յարութեան այս կենդանի յիշատակը, քսան դարերէ ի վեր պանծացուցած է մեր եկեղեցին, ներշնչելով մեր մէջ կենդանութեան հզօր շունչը, արծարծելով մեր մէջ խանդավառութեան հուրը, ապրելու, գործելու, օգտակար ըլլալու եւ վայելելու աշխարհի ու անդրաշխարհի մը յաւիտենական հմայքը։

Սակայն ո՛վ է ան որ պիտի կարենայ մասնակցիլ այս տիեզերական ուրախութեան, յողովութենէ վերջ՝ հանգիստի, տառապանքէ ետք՝ վայելքի։ Ա՛յն եւ ա՛յն միայն որ կարող ըլլայ հետեւիլ խաչին, կեանքի ձախողումներին, ա՛յն որ կարող ըլլայ ապրիլ ինքն ու ապրեցնել իրեննիւրը, ըստ օրինակի միւս՝ Վարդապետին։ Գիշերային խոր քունէ՛ զարթնում. թմրած անզգայութենէ՛ զգացողութիւն, մահացուցիչ անտարբերութենէ՛ ծիր եւ աշխոյժ գործունէութիւն, պարտամոռացութենէ՛ պարտաճանաչութիւն . ահա՛ յարութեան կենդանի պատկերներ, որոնք կը խորհրդանշեն ասդենի կեանքին իմացական աշխարհին իրական պատկերներով անդենի—յաւիտենական կեանքի—վարդանկար հեռապատկերը։

Ծնորհաւորութիւնը, մաղթանք, այցելութիւնք, նոր նոր արդ ու զարդ, հագուստ ու կապոստ, ջութակ ու քնար չեն բաւեր ճանչցնելու մեզ իրերու որդեգիր յարուցեալ Փրկչին։

Բարուց ու զգացման, որտի ու մաքի կենդանի յարութիւն մը կը մաղթեմ ամենուն ալ։

ՄԿՐՏԻՉ ՔԶ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Հալեպ

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱԿՈԲ ՍՐՃԵՑԻ

Ա.

Ասորական մատենադրութեան շքեղ փառքերէն մէկն է Յակոբ Սրճեցի, ծագած Ե. Դարու երկրորդ կիսուն, եւ կը կոչուի նաեւ Յակոբ Արծուպոյ եպիսկոպոս(1) որուն կը հանդիպինք մեր շատ մը ձառնարկներուն մէջ, Յակոբ Սրճեցի ծնած է Եդեսիոյ մօտ գտնուած Սրուճ(2) գիւղաքաղաքին մէջ. եւ հաւանաբար ատեն մ'ալ վարած է այս քաղաքին եպիսկոպոսական պաշտօնը, Սրճեցին կրնանք ընդունիլ Եդեսիոյ Պարսից դպրոցին ամենավերջին եւ միանգամայն ամենափայլուն աշակերտներէն մին, եւ հաւանական է որ չկրցաւ աւարտել իր ուսման ընթացքը այս դպրոցին մէջ, որովհետեւ Միջագետսց աշխարհը կրօնական երկպառակութիւններով տակն ու վրայ ընող նեւատուականները, իրենց պարագլուխ ունենալով նշանաւոր Բարձուժա Ասորին, Եդեսիա ապաստանելով Պարսից դպրոցը իրենց ազդեցութեան տակ առած էին, եւ ասկէ կը վարէին իրենց կրօնական պայքարը Բիւզանդիոնի դէմ, որով 489ին Ջենոն կայսեր մէկ հրովարտակով դպրոցը փակուեցաւ եւ աշակերտներն ալ ցրուեցան, որոնց մէջ էր նաեւ Սրճեցին: Սակայն ասով չվերջացաւ ինդիրը, Բարձուժա եւ իր կուսակիցները՝ զայրացած՝ Եդեսիայէն քաշուեցան Կիսի հարաւ-արեւելք, Ամթայ մօտ Մծբին քաղաքը, ուր փոխադրեցին նաեւ Պարսից դպրոցը: Մծբինի մէջ թէեւ նախկին փայլը չունեցաւ այս դպրոցը, սակայն ժամանակ մը շարունակեց իր ծոցէն դուրս տալ նշանաւոր մատենագիրներ, որոնք ապագայ նեստորական եւ մի-

արնակ Յակոբիկեաններու եկեղեցւոյն գլխաւոր գործիչները դարձան միանգամայն ճոխացնելով ասորական մատենագրութիւնը:

Սրճեցին իր ուսումը կատարելագործեց Մծբինի դպրոցին մէջ, բայց այն ատենի աստուածաբանական կարծիքներուն մէջէն — ուր մեծ կշիռ ունէր նաեւ Մրժբինի դպրոցին դաւանանքը — շատ մաքուր կերպով դուրս եկած է Սրճեցին, եւ Արեւելեան Եկեղեցիներէն ընդունուած է իբրեւ ուղղափառ եւ համալգային վարդապետ, առողջ եւ յստակ գաղափարներով եւ աստուածաբանական ուղիղ բանաձեւերով օժտուած:

Սրճեցիի կեանքին շատ մը գիծերը մութ եւ անծանօթ մնացած են, որուն գլխաւոր պատճառն է իր ժամանակ ազդող ուրիշ Յակոբի մը (Բարադէոս կամ Ծանծաղոս) հետ շփոթուած ըլլալը, ինչպէս դիտել կուտայ Հ. Մ. Չամչեան, ըսելով. «Այլ երկոցուն սոցա վարք եւ ճառք շփոթ աւանդին յոմանց, եւ յազգի միւրում իբր միոյ համարեալ են, յորմէ պարտ է զգուշանալ» (Հմտ. Պատմ. Հայոց Բ. էջ 438): Ուրիշ գլխաւոր պատճառ մ'ալ՝ Սրճեցւոյն լռիկ ու անձայն գործունէութիւն մ'ունենալն է, որ միայն ձառնարկներու մէջ կը սահմանափակուի եւ Միջագետքի անձուկ մէկ միջավայրին չըջանակէն դուրս չէ ելած, մինչ վերջինը՝ Յակոբ Բարադէոս՝ ընդարձակ եւ արդիւնաւոր գործունէութիւն մ'ունի Յակոբիկ (միաբնակ) Եկեղեցւոյն կազմութեան համար: Հակառակ ունեցած իր աննշան ու համեստ կեանքին, Սրճեցին կը մնայ իր գրիչով ու գաղափարներով ուղղափառ Եկեղեցւոյն նշանաւոր Հայրերէն մէկը, եւ այլ եւ այլ նիւթերու վրայ գրած իր ճառերը կը պահեն մեր ձառնարկներուն էջերը (1):

Կենսագրական այս քանի մը հակիրճ ցիծերէն վերջ կ'արժէ ակնարկ մը նետել

(1) Հմտ. Մատեն. Հայկ. հին Թարգմ. էջ 572:

(2) Այս գիւղաքաղաքին աւերակներուն մօտ այժմ շինուած է Թրոս անուն գիւղը, ուրկէ մամ մը հեռաւորութեամբ դէպի հարաւ կը գտնուի Զիւրէթ անուն քրդաբնակ գիւղը, սւր տակաւին կը տեսնուի Սրճեցւոյն գերեզմանը՝ բոլորովին մզկիթի վերածուած:

(1) Նալեան Յակոբ Պատրիարք կ'անուանէ Սրճեցին «բանիրուն եւ մարգարէ»: (Տես Գանձարան Ծանցման, էջ 282: Հմտ. Հ. Մ. Չամչեան, Հայոց Պատմ. Բ. էջ 488):

նսեւ իր գրական արտադրութիւններուն վրայ որոնք թէ՛ քանակով եւ թէ՛ որակով ճոխ ու գունաղեղ են:

Ժամանակագիր մը կը գրէ, «Ի թվին Շ. (500) Սուրբն Յակոբ Սրուճեցին արար Ր (5000) ճառ» (Հմտ. Հայկ. մատ. թարգմ. էջ 575): Իրաւ որ քիչ մը նախազանց կը թուի այս թիւը, սակայն պէտք է ըսել թէ Սրճեցին հակառակ այն բարձր դիրքին զոր գրաւած է ասորական մատենագրութեան պատմութեան մէջ, գլուխ գործոց մը չէ թողուցած. իր բեղուն գրչին արտադրութիւնները եղած են միայն մանր ճառեր, ներբողեաններ, աղօթքներ, ջատագովականներ, որոնք ամէնքն ալ Քրիստոսի կեանքին եւ տնօրէնութեանց շուրջ կը դառնան:

Սրճեցուն ճառերը մեծ արժէք ունին կրօնական տեսակէտով Քրիստոնեայ Եկեղեցիներուն համար. թէեւ եկեղեցւոյ պաշտամունքի ատեն չեն կարգացուիր, սակայն ճառերն իրենց մէջ իրրեւ կարեւոր առթիւմաններ կը մնան ամէն աւանդ համար, որոնք եկեղեցական մատենագրութեամբ եւ վարդապետութեամբ կը զբաղին:

Այս ասորի Հօր ճառերուն հայերէն թարգմանութիւնը Արծաթի Դարուն մէջ կատարուած է, մասնաւորապէս Դրիգոր Վկայասէրի ատեն՝ որ մեծ խնամք եւ հոգածութիւն ցոյց տուաւ մինչեւ այն ատեն անծանօթ մնացած եկեղեցական Հայերուն գործերը հայերէնի թարգմանելու, եւ ճիշդ այս նպատակին գործադրութեանը համար Վկայասէր այցելեց Եգիպտոս եւ Նեղոսի ափերուն վրայ գտնուած ճգնաւորանները: Հոն ապրող Ասորի եւ Եգիպտացի Հայերուն գործերը ձեռք բերելով, վերադարձին ինքը թարգմանեց եւ կամ թարգմանել տուաւ, ինչպէս կը կարգանք Սեւանայ վանքը գտնուած գրչագիր յիշատակարանի մը մէջ. «Թարգմանեցաւ ճառս յԱսորւոց ի մերս՝ հրամանաւ տեառն Դրիգորիսի Հայոց Կաթողիկոսի, ի ձեռն քահանայի ումնմն Իսահակ անուն կոչեցեալ, ասորի յազգէ, անարուեստ գոլով մերոյ Դպրութեանս, չաղփաղփի եւ կոկորդախօս լեզուաւ, եւ ստուգեցաւ ի սուրբ եւ յանրիժ եւ ի մեծ արհիպիսկոպոսէ, ի տեառն Ներսիսէ հետոր իմաստասիրէ» (Հմտ. Հայկ. մատ. թարգմ. էջ 573):

Գ. ԳՍ.ՊՊԷՆՃԵԱՆ

Ի Ն Կ Ա Ծ Բ Ո Յ Ն Ը

Աշնան իրկուն մէր արդէն արեւն հազիւ կը ժպտեր
Ամպերու թոյլ բացուածքէն տերեւներուն վրայ չոր,
Քրիզանդէմները թոշնած, ինչպէս թեղոշն ու պտեր,
Կը հիւծէին գարնան նուրբ կարօտովը հրատոջոր:

Կուլար քամին իրիկուան երգ մը վիշտի ու սուգի
Ծառի մը մէջ, ուր փոքրիկ խարխուլ բոյն մը կ'երերար.
Տակն էր նստած բանաստեղծ մ'աչքը լեցուն արցունքի
Լճացումով մը, կ'երգէր իր բաղձանքները արդար:

Թռչուն-մայրիկն էր գացած կեր գտնելու այդ իրկուն
Իր մէկ հատիկ ձագուկին աղուամագոտ, աղազուն
Որ կը ճվար բոյնին մէջ ու կ'ուզէր մայրն իր անձկոտ:

Հովը հարուած մը տուաւ այդ չոր ծառի ճիւղերուն
Բոյնը ինկաւ գետնին վրայ ու ձագուկն ալ երերուն
Փչեց շունչն իր բերթողին ձեռքերուն մէջ գգուանքոտ:

(Թարգմ. գաղղ. Կ)

ԳՊՐԵՎԱՆՔՅԻ

ԳՐԱՆՈՍՏԱԿԱՆ

ՀԱՄԱՊԱՏՈՒՄ

Չորս Աւետարաններուն պատմականութիւնը, շարադրելով եւ համաձայնելով եւ բացատրելով պատմութիւնը. — Պարզաբանեց ՄԱՂԱՔԻՍ ԱՐՔԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ, նախկին Պատրիարք: Էջ ԺԶ-1104. Քարտէզներ եւ պատկերներ: Հրատարակիչը Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, Կոստանդնուպոլիս, 1911: Դին. 25 դրշ.:

Օրմանեան Սրբազան պատրիարքութենէ քաշուելէ ետքը, բոլորովին առանձնացաւ իր տունը, իր աշխատութեան սենեակը եւ նուիրուեցաւ գրչի ինքնամփոփ կեանքին: Իր աշխատութեան արդիւնքները պիտի ըլլան մեծ եւ հետաքրքրական: Օրմանեան սրբազան իր առանձնացումէն ետքը՝ հերոս հրատարակեց L'Eglise Arménienne, որուն պէտքը կը զգացնէին հոյ մը օտարազգիներ, ամերիկացի եւ եւրոպացի, որ կը հետաքրքրուէին Հայաստանեայց Եկեղեցիով եւ կը փափաքէին ամփոփ եւ բազմակողմանի զաղարար մը կազմել Սրեւելքի այս հնագոյն Եկեղեցւոյն վրայ: Այս տարի ալ կը հրատարակէ Համապատումը, խոշոր գործ մը, որ հայ գրականութեան մէջ, հին ըլլայ թէ նոր, հորութիւն մըն է ուշագրաւ: Համապատումը Չորս Աւետարաններու ի մի ձուլումն է պատմական յատակի մը վրայ: Այս տեսակ գործեր շատ կան եւրոպական լեզուներով, որոնք ընդհանրապէս Յիսուսի կեանքը կամ Վարդ Յիսուսի խորագրով ծանօթ են: Ուղղակի Չորս Աւետարաններու խօսքերով ի մի ձուլուած Աւետարաններ ալ կան: Հայ մատենագրութեան մէջ ունեցած ենք Հին եւ Նոր Կտակարաններու պատմութիւններ, բայց չենք ունեցած Օրմանեան Սրբազանի Համապատումին ծրագրով աշխատութիւն մը, ոչ Նախնեաց քով, ոչ ալ նոր մատենագրութեան մէջ:

Օրմանեան Սրբազանի Համապատումը ուշագրաւ նորութիւն մըն է, որովհետեւ շատոնց է որ Հայոց կրօնա-պատմական գրականութեան մէջ նշանակելի աշխատութիւն մը երբեւն չէ եկած՝ ուղղակի

արդիւնք հայ հեղինակի հետադատութեանց: Այն ժամանակի մտաւորականութեան գրոշմը պէտք է զարնուի իր գրական արտադրութեանց վրայ: Եւ հայկական նոր գրականութիւնը, իր բոլոր ճիւղերուն մէջ, կարելի է ըսել՝ չափազանց կեդրով կրեց ժամանակին մտաւորական գրոշմը: Սանկ 20-35 տարուան ժամանակի մը հայ գրականութիւնը, եթէ խղճամիտ քննութեան մը ենթարկուէր, պիտի տեսնէինք թէ հայ մտաւորականութիւնը ինչն արտադրած է թուրքիոյ մէջ եւ թուրքիայէն դուրս, արտադրողները ինչ հմտութեան եւ պատրաստութեան մարդիկ եղած են, ինչչափ հարազատ կըցած են ըլլալ անոնք՝ իրենց ցեղին սիրտն ու միտքը թարգմանելու փափուկ գործին մէջ, կամ թէ անոնք որչափ խնամքով եւ ստուգութեամբ կարող եղած են զգալ իրենց ցեղին պէտքերը, եւ շարժած իրենց գրիչները: Այսպիսի քննութեան մը ընթացքին, քննիչը պիտի հանդիպէր կարգ մը գլուխ-գործոցներու եւ ասոնց զուգընթաց շատ մը թիթիւ գրեւորածներու, գրական նորութիւններու, բայց մասնաւորապէս կարելի պիտի չըլլար հանդիպել Համապատումի պէս արտադրութեան մը, որուն արժէքը ուշագրաւ է եւ նշանակելի՝ սա՛ պատճառներով:

Ա) Անուարանալի է որ Հայ Եկեղեցին այսօր շատ աւելի պատրաստուած ոյժեր ունի իր մէջ, քան նախորդ դարերու մէջ: Բայց նախորդ դարերու Հայ Եկեղեցականները շատ աւելի նուիրուած էին զուտ հեղեցական նիւթերու մշակութեան, քան գրականութեան ուրիշ ճիւղերուն: Չոր օրինակ Ժէ. դարէն ասոյին քարոզարարական ահագին գրականութիւն մը ունինք:

Բ) Ժամանակակից Հայ Եկեղեցականութեան պատրաստուած ոյժերը, ընդհակառակը շատ աւելի նուիրուած են կողմնակի նիւթերու մշակութեան: Ասիկա շատ ծանր եւ միանգամայն շատ թանկագին աշխատութիւն մըն է, որուն չնորհիւ Նախնեաց գործերը գիտնօրէն կը քննուին, կ'ուսումնասիրուին եւ սքանչ

չեղի արդիւնքներ կուտան: Ժամանակիս գիտութեան պահանջն է այս, եւ պահանջն է նաեւ ժամանակիս ոգւոյն: Այսինքն կրօնական իրերու մասին տիրող լայնախոհութիւնը, որ անտարբերութեան կը մօտենայ մտաւորականներու շրջանակին մէջ, կարծես անտարբերութեան կը մղէ նաեւ Հայ եկեղեցւոյ պատրաստուած ոյժերը, եւ այս պատճառով ասոնք շատ աւելի կը յարմարին ժամանակի ոգւոյն, եւ իրենց գրական զբաղումները աւելի յաջող եւ աւելի արդիւնաւոր կ'ըլլան կողմնակի նիւթերու մէջ:

Կարելի չէ ուրանալ զարուս ազդեցութիւնը, ազատամտութեան այն բուռն հոսանքը, որմէ անպայման կը բռնուին ամէն կարգի մտաւորականները. այո՛, անուրանալի է այս Բայց ամէն հոռանքէ բռնուելու եւ ամէն գաղափարի եւ աշխարհայեացքի յարմարելու ճկնութիւնը (souplesse), զոր շատ կը գտնենք, պատճառ եղած է որ հայ եկեղեցականութիւնը նուիրուի աւելի կողմնակի նիւթերու մշակութեան:

Իրաց այս վիճակին մէջ Օրմանեան Սրբազանի Հանապատուը նշանակելի երեւոյթ մըն է, եւ կ'արժէ որ այս խոշոր գործը ուշադրութիւն գրուէ իր մեծ նշանակութեամբ: Հանապատուին նշանակութիւնը մեծ է՝ ամէնէն առաջ իր տիեզերական եւ մասնաւորապէս համաքրիստոնէական արժէքով: Վասնզի, ինչպէս կ'ըսէ համապատմող Սրբազանը իր նախաքանին սկիզբը, «Աւետարանը այն գիրքն է, ուսկից աւելի բարձր մտաւորական արտագրութիւն մը ի լոյս եկած չէ աշխարհիս վրայ» եւ այս տիեզերական գիրքին վրայ, իր յայտնութենէն կամ ծագումէն մինչեւ հիմա, այնչափ բան գրուած է հին եւ նոր բաղմաթիւ լեզուներով, որ կարելի չէ չխորհիլ, մանաւանդ չխոնարհիլ անոր մեծ նշանակութեան առջեւ: Հանապատուին նշանակութիւնը մեծ է նաեւ հայ կեանքին եւ հայ մատենադրութեան տեսակէտով: Հայերը սկիզբէն ի վեր սիրած են Աւետարանը, եւ սիրելու իրաւունք ունէին, ոչ միայն

իբրեւ իրենց ալ կրօնագիրքը, այլ մանաւանդ իբրեւ իրենց ուղղուած աւետիքներու վաւերագիրքը: «Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ»ը, աւետարանեալ ազգերու մէջ, դարերու ընթացքին՝ տառապանքէ տառապանք, հալածանքէ հալածանք, հայրենազրութենէ հայրենազրկութիւն, միշտ քաշկռտուած Հայ Ազգին աւելի՛ կը յարմարէր իբր քաջալերութիւն: Եւ Հայը Վարդանանց փառաւոր դէպքին մէջ հռչակեց, թէ «Հայր մե՛ր՝ զՍուրբ Աւետարանն գիտեմք, եւ մայր՝ զառաքելական եկեղեցի Կաթողիկէ» (Եղիշէ, Գ.): Հայք իրենց զրջութեան եւ մանրանկարչութեան բոլոր նրբութիւններով եւ հրաշալիքներով ալ զեղեցկացուցին Աւետարանի գիրքերը, որոնք թանկագին են հայ գեղարուեստի եւ առհասարակ քրիստոնէական գեղարուեստի պատմութեան տեսակէտով ալ: Օրբէլեան Ստեփաննոս եպօ. կը պատմէ թէ միայն Սիւնեաց նահանգին մէջ տաւր հազար օրինակ ձեռագիր Աւետարան կար: Ասոնք խորհիլ տուող իրողութիւններ են Հայու կեանքին մէջ, եւ ցոյց կուտան, թէ Աւետարանը ո՛րչափ մօտիկ էր իրեն: Հայոց մէջ այսչափ սիրուած, այսչափ տարածուած Աւետարանի վրայ, նախնիք ամէն գարու մէջ, իրենց հմտութեան եւ պատրաստութեան չափով գրած եւ թարգմանած են մեկնութիւններ, բացատրութիւններ. եւ անշուշտ նախատինք մը, մեծ ամօթ մը պիտի ըլլար մեր ժամանակին մէջ ալ՝ մեզ համար, եթէ արդի գիտութեան պաշարներէն եւ զիւրութիւններէն օգտուելով՝ հայ եկեղեցական մը չզբաղէր Աւետարանով: Օրմանեան Սրբազանի Հանապատուը այս տեսակէտով ալ ունի իր մեծ նշանակութիւնը: Աւետարանը՝ ժողովուրդին հասկնալի լեզուաւ մը բոլորովին նոր ձեւաւորութիւն մը կրած է, եւ Աւետարանի այս նոր ձեւը, իր հետաքրքրական եւ հրապուրիչ հանգամանքով, իրաւունք մը չի՛նձ է Հանապատուին, որ առհասարակ կարգացուի ամէն Հայու կողմէն:

Կ'արժէ որ զայն կարգան մասնագէտ

ներ, որոնք պիտի գնահատեն համապատ-
մող Սրբազանին ձեռնհասութիւնը:

Կ'արժէ որ զայն կարգան եկեղեցա-
կաններ, որոնք իրենց ծանօթ գիրքի մը
հետ նոր ծանօթութիւններ պիտի ունե-
նան:

Կ'արժէ որ զայն կարգան տուներու
մէջ, իբր ամէնէն ակնորոշելի, չինիչ, պատ-
մութիւն մը, որու բարոյականին պէտք
ունին մեր հայրենի օճախները:

Կ'արժէ որ զայն կարգան, կրօնքի,
եկեղեցիի հետ իրենց յարաբերութիւն-
ները խզողներ, որոնք պիտի մտածեն թէ
իրաւունք ունէ՞ն չճանչնալու Աւետա-
րանի հեղինակութիւնը: Վասն զի ես վըս-
տահ եմ որ, Հայոց մէջ անտարբերներ,
կրօնքը քննափետողներ, եկեղեցին ար-
համարհողներ, քրիստոնէութիւնը ծաղրող-
ներ, հաշիւդին հիւնդ համեմատութեամբ
չեն ճանչնար Աւետարանը, եւ նոյն իսկ
անգամ մը ուղղակի չեն կարգացած զայն,
եւ իրենց աննպաստ կարծիքը չինած են
ուրիշներու կարծիքով:

Օրմանեան Սրբազան՝ Հաւնապատմութիւն
գրելու ատեն որոշ ծրագրի մը հետեւած
է. այն է «Աւետարանը ժողովրդականաց-
նել» եւ պէտք է ըսել որ յաջողած է իր
ծրագրին գործադրութեան մէջ:

Իմ տեսութեամբ պարզ ժողովրդական
ձեռնարկ մը չէ՝ Հաւնապատմութիւն. ան ու-
նի գիտական արժէք մըն ալ. վասն զի
Աւետարանը ըստ ինքեան բացատրելու,
պարզելու եւ իրողութիւնները իրենց
ժամանակագրական կամ պատմական կար-
գով շարադրելու համար՝ հետեւած է
գիտական ուղղութեան մը, այնպէս որ ըն-
թերցողը Հաւնապատմութիւն մէջ «պիտի
«գտնէ ոչ միայն պատմական, վարդապե-
տական, դաւանական եւ բարոյական տե-
«սութիւններ, այլ եւ ժամանակագրական,
«տեղագրական, հնարասական, գրչագրա-
«կան եւ լեզուաբանական տեղեկութիւն-
«ներ, ինչպէս որ եւ ինչչափ որ ընդ ա-
«ռաջ ելլող ինդիւիդներ կը պահանջէին,
«առանց հատորը չափազանց ստուարա-
«ցնելու»:

Թէեւ նիւթը պատրաստ, չորս տար-

բեր գրիչներէ ելած, բայց ասոնք ձուլել
առանց աւելի պակասի, եւ մէկ գիրքի
վերածել պատմական յատակի վրայ, եւ
լրացուցիչ բացատրութիւններով կազմել
ամբողջութիւն մը, շատ դիւրին աշխա-
տութիւն մը չէ, մա՛նաւանդ նկատի առ-
նելով համապատմող Սրբազանի յառաջա-
դած ստիքը, որ ուրիշներու համար
անգործութեան եւ ակամայական կեանքի մը
չըջան պիտի ըլլար: Բայց Օրմանեան
Սրբազան իր աշխատելու ծանօթ կորովն
ու կանոնաւորութիւնը կը պահէ անվը-
թար, եւ անշուշտ հետզհետէ պիտի հրա-
տարակէ իր ուրիշ գործերը, որոնց մէջ
իր գլուխ-գործոցը պիտի ըլլայ անշուշտ
Հայաստանեայց եկեղեցւոյ լիակատար
պատմութիւնը, սկիզբէն մինչեւ հիմա:

Սրբազան հեղինակը Հաւնապատմութիւն
նախաքանին մէջ (էջ Թ.) երկու փափաք
կը յայտնէ. մէկը Պաղեստինը, Սուրբ Տե-
ղերը տեսնել, իր հմտօրէն զիտցածները
անձամբ ալ տեսնելու եւ ճշգրտելու հա-
մար, եւ ետքը՝ Նոր Կտակարանի Առաքե-
լական մասերն ալ (Գործք Առաքելոցէն
մինչեւ Յայտնութեան վերջը) Հաւնապա-
տմութիւն գրութեամբ ի մի ձուլել:

Առաջին փափաքին սայր երկինք որ
հասնէր Դպրեվանքէն իսկ կը տածէր
այդ փափաքը, եւ պէտք կը զգար ասոր, իր
Սուրբ գրոց դասախօսութեանց միջոցին:

Իսկ երկրորդ փափաքին գործադրու-
թիւնը, ըստ իս, պէտք է յետաձգել, եւ
առաջնութիւն տալ Հայ եկեղեցւոյ պատ-
մութեան աւարտումին: Արդէն ձեռնար-
կուած եւ կարծեմ կիսով չափ ալ խըմ-
լագրուած գործ մըն է այս, զոր կ'արժէ
ամէնէն առաջ ի գլուխ հանել. վասն զի
լիակատար եկեղեցական Պատմութիւն
մը չենք ունեցած մինչեւ հիմա. իսկ իբր
դասադիրք պատրաստուածները (Մեղի-
սեղեկ եւ Յուսիկ եպիսկոպոսներէն) սպա-
ռած եւ հինցած են իսկ Աբրահամ Զա-
մինեանցի «Հայոց եկեղեցու պատմու-
թիւն»ը (1903, Նոր Նախիջեւան) չկրնար
բռնել լիակատար եկեղեցական պատմու-
թեան մը տեղը:

Ասկից զատ Հաւնապատմութիւն սպասուած

եւ նոր տպագրութեան պահանջը լաւագոյն գրաւականը եւ քաջալերանքը պիտի կազմեն առաջադրուած Առաքելալի խմբագրութեան ձեռնարկելու համար:

Համապատասխան վերջացնելու համար այս առիդը, ըսեմ թէ գործին առաջին մասերուն առաջին հրատարակիչը ես եղայ ԼՈՅՍ եկեղեցագիտական շաբաթաթիւթի մէջ 1905-1906 (Տե՛ս Լոյս 1905 Դեկտմ. 3, թիւ 49, էջ 1172) գրաքննական այլանդակ կրճատումներով կամ փոփոխութիւններով, Ի՛նչ տարօրինակ վայրկեաններ էին ասոնք. երբ հին կառավարութիւնը կը կասկածէր Աւետարանի մէջ յիշուած իշխան կամ քաղաւոր բաներէն եւ գրաքննիչը անխնայ կը ջարդէր զանոնք . . . իր գրչին քմահաճոյքով:

Ուրախ եմ որ հիմայ, սահմանադրական նոր կառավարութեան ազատ մամուլէն դուրս կուգայ Համապատասխանը, առանց կրճատումի, առանց փոփոխութեան, հեղինակին անկաշկանդ ազատութեան բոլոր արդիւնքով, որ իրեն վայել պատուաւոր տեղը պէտք է գրաւէ ամէն Հայոց տան եւ ամէն հայ գրադարաններու մէջ:

ԲԱՐԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Անկիւրիա

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԲՆՈՒԹԻՒՆԸ

ՄԻՏՔԻ ԿԱԹՈՒԼՆԵՐ

Մարդկութիւնը իր համայն ձիրքերով սոսկ հողագնտի մէկ արտադրութիւնը կը համարին ոմանք: Վայրկեան մը համամիտ գտնուինք անոնց, Բայց արդեօք հողագունտը կամ նիւթը իր բնական զօրութեամբ կարող էր ժամանակին՝ մարդու նման անուրանալի ձիրքերով օժտուած վսեմ եւ կատարելագործելի էակ մը ստեղծագործել: Լաւ հւս է ըսել՝ իր կացութենէն եւ վիճակէն բոլորովին անգիտակից իր մը՝ աշխարհս՝ կրնա՞ր արդեօք գրեթէ իր ամէն մէկ ըրածին զիսակից իր մը՝ մարդս՝ գոյացնել իր ծոցէն:

Անշուշտ չնչաւոր բանական մը կրնա՞յ արտադրել արդեօք:

Ինքնին ինքնիրմէն անգիտակից նիւթ մը՝ տիեզերքը, իր կազմական կանոնաւորութեան, իրարու հետ ունեցած առնչութեան եւ ներգաշնակ մեքենականութեան մասին մղում մը կամ զօրութիւն մը կրնա՞ր ընձեռել արդեօք, առանց զիսակից մեծագործ ճարտարագործի մը . . . :

* Գրեթէ ամէն մարդ աշխարհի վրայ անմահ մնալու, սապէս ըսեմ, առ յուէտ յիշուելու բնածին փափաք մը կը տածէ. ուրեմն երբ ամենանշո՞ր Զօրութիւնը՝ Աստուած՝ սքանչելարուեստ տիեզերքի մէջ անյայտ մնալու, եւ իր ամենակարող մեծութիւնը ճանչցուելու համար՝ խորհելու եւ ճանչնալու ձիրքերով գեղազարդուած էակներ կը ստեղծագործէ՝ մարդս եւ անմարմինները, մի՛թէ գերագոյն իրաւունք մը չունէ՞ր առ այս: Վսեմ, անհուն երախտագիտութեան արժանի գործ մը չկատարե՞ց Աստուած, անձնիշխան եւ իր գործելուն մէջ ազնւ թողուած բանական մարդս ստեղծելով: Ու երբ մարդս՝ անշունչ գեղակերտ ձեռարուեստի մը վրայ կը հիմնայ, ինչո՞ւ նոյն իսկ իր բանական հրաշակերտութեան վրայ անդրադառնալով՝ չսքանչանա՞յ զոնէ զինքը Հրաշակերտողին վրայ, եւ երախտագիտութեամբ չճանչնայ Անոր վեհութիւնը եւ չհամակերպի նորա սուրբ կամփին:

* Յայտնութիւնը շատերու համար անկարելի եւ բնականի ներհակ բան մը կը թուի: Ամենակարող Աստուծոյ մը համար ի՛նչ բան անկարելի է արդեօք: Ան՝ որ սոսկ հողագանգուածէ մը բանական հրաշակերտ մը՝ մարդս կրնայ ստեղծել, ուրեմն անհնարի՞ն բան մ'է իրեն համար, երբ իր աներեւոյթ բնութեան երեւելի ձեւ մը կամ կերպարանք մը կուտայ՝ յուզողութիւն անուղղայ եւ ապերախտ մարդկութեան: Ոչինչէն ինչ ստեղծող մը կարող չէ՞ արդեօք ինչէ մը ինչ եւս ստեղծել . . . :

* Ես պիտի համարձակիմ հռչակելու որ եթէ հանդերձաւին մէջ վարձի եւ պատժոյ խնդիր մը չկենար իսկ, մարդ-

կութեան խիստ ստուար մասը սիրայօժար ձրի աստուածապաշտ պիտի ըլլար ու ճանչնար Անոր ամենակարող զօրութիւնը

ԿՈՒՄՍԻ ԲԶՆՅ. ՖԻՐԻԱԹԵԱՆ

Պանսրմա

ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Զատկի շաբթուն Պոլիս այցելեցին Ուսանողներու Համաշխարհային Դաշնակցութեան մը իբր 250 ներկայացուցիչները, 32 տարբեր երկիրներէ : Այդ դաշնակցութեան նպատակն եղած է հետամտիլ ուսանողներու կեանքի բարեփոխման՝ քրիստոնէական հիմերու վրայ : 1895էն ի վեր հիւսիսային եւ արեւմտեան Եւրոպայի եւ Ամերիկայի զանազան երկիրներու Ուսանողական Միութիւնները իրարու հետ ծանօթանալով եւ դաշնակցելով հիմնած են այդ համաշխարհային միութիւնը, վարիչ ունենալով համալսարաններու եւ քօլէճներու նախագահներ եւ անօրէններ, որոնք այս դովելի գործը հիմնած են, զերծ կղերական եւ յարանուանական խնդիրներէ, ընդհանուր քրիստոնէական հիմերու վրայ : Դաշնակցութեան նպատակն եղած է օգնել եւ առաջնորդել ուսանողներուն, հմտալից բանաստեղծութիւններով անոնց միտքը ընդարձակել, ակումբներու միջոցաւ անոնց ընձեռել օգտակար մասնացներ, զանոնք իրարու ճանչցնել, ապագայ պիտական մարդիկն ու գործի մարդիկը կանուխէն յարաբերութեան մէջ դնել տարբեր ազգութիւններու նոր սերունդին հետ, եւ զգուշացնել զանոնք անկրօն, անբարոյական քանդիչ ազդեցութիւններէ եւ վատառողջ միջավայրերէ : Այս գեղեցիկ նպատակը յաջողցնելու համար պարբերաբար ժողովներ կը գումարուին զանազան քաղաքներու մէջ : Այս տարի նոյն ժողովը Պոլսոյ մէջ գումարել որոշեալ ըլլալով, Զատկի կիրակի առաւել, Դաշնակցութեան անդամներէն զա-

նազան անձեր բանաստեղծներ բողոքական հասարակութեան եկեղեցիներու, մատուռներու եւ դպրոցներու մէջ, Բանաստեղծներուն մէջ կան Չինացի մը, Ճապոնցի մը, եւ Հնդկ մը, նաեւ Անգլիացի, Ամերիկացի, Հայ եւ ուրիշ ազգէ բրօթէսէօներ եւ այլն : Չինք դիտել թէ Հայ ուսանողներ ո՛րչափ հետաքրքրուեցան ուսանողական այս համաշխարհային Դաշնակցութեան ծրագրով եւ գործերով : Ամէն պարագայի մէջ փափաքել էր որ օգտուէին այս եղական առիթէն, միջազգային կարող միաքերու բանաստեղծեանց եւ խորհրդակցութեանց ներկայ գտնուելով : Դաշնակցութեան անդամք կիրակիի բանաստեղծութիւններէն հտը, անցեալ շաբթու խորհրդակցական եւ հրապարակային գումարումներ ըրին Ռօպէրդ Քօլէճի մէջ, եւ տեղի ունեցան շահագրգռական լիճարանութիւններ՝ իմացական եւ բարոյական նիւթերու վրայ, որոնց մասին կը յուսանք տեղեկութիւններ տալ յառաջիկային :


*, Կիրակի օրուան բանաստեղծներուն մէջ նշանակելի էր Չինացի պատուիրակ Մր. Ուանկ, որ կիրակի օրը Բերայի Հայ-Աւետարանականաց եկեղեցիին մէջ խօսեցաւ օրուան քարոզը՝ սահուն Անգլիերէնով մը, եւ իր խօսքն ուղղելով Հայոց ազգին, ըսաւ թէ երջանիկ կը զգայ ինքզինքը, ճշմարտութեան լոյսին տակաւին նոր դարձող ազգի մը ողջոյնը բերելով 1900 տարիէ ի վեր արդէն այդ լոյսը ունեցող Ազգին : Չինացի քարոզիչը մանրամասն եւ հետաքրքրաշարժ տեղեկութիւններ տալէ հտը Չինաստանի իմացական, քաղաքական եւ տնտեսական կեանքին մէջ յառաջ եկած հրաշալի փոփոխութիւններու մասին, որով նոյն ընդալճակածաւալ երկիրը հսկայաքայլ կը յառաջդիմէ քաղաքակրթութեան շաղկին մէջ, ըսաւ թէ ասիկայ պէտք է վերագրել Քրիստոնէութեան ազդեցութեան : Չինացի բանաստեղծ յիշեց զէպքեր ուրկէ կը տեսնուի թէ բարբերու վրայ ո՛րքան գեղեցիկ ներգործութիւն ունեցած է Քրիստոսի վարդապետութիւնը : «Չինաստան բարոյական սքանչելի սկզբունքներու տէր էր երկար ատենէ ի

ՔՈՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ Տ. ԵՕԱՔԻՄ

ՍԱՐԿԱՒԱՒԻ ՀԵՏ

վեր : ունէր Կոմիւնիկոսի վարդապետութիւնը . բայց զժառանգաբար անոր բարոյականը զուտ ժխտական է եւ չկրցաւ ազդել բարքերու վրայ եւ յեղաշրջել զանոնք : Ընդհակառակն Քրիստոսի քարոզած բարոյականը ներդրածական է . կեանքի կատարեալ ուղեցոյց մըն է անիկա , եւ այս է պատճառ որ կենդանութիւն կը ներշնչէ եւ կ'ոգեւորէ մարդիկը դէպի գործունէութիւն , մինչ Չինացի երեւելի իմաստասէրին քարոզութիւնը ազդեցութիւն չէր ունեցած : » Բառնախօսը Չինաստանի ընդհանուր կեանքին մէջ երեւցած բարեփոխութիւնները մասնաւորապէս զատ , յիշեց մասնակի դէպքեր ալ , ուր ցոյի եւ գինեմու երիտասարդներ Յիսուսի վարդապետութիւնն ընդգրկելէ ետքը նոր եւ օրինակելի կեանքով մը սկսած են ապրիլ : Իր խօսքերը , որոնք խոր տպաւորութիւն թողուցին ունկնդիրներու վրայ , լաւագոյն պատասխան մըն են այն կարգ մը սկեպտիկներու , որոնք Քրիստոնէական կրօնի բարձր բարոյականին վրայ սառեւր ձգել կ'ուզէին իրենց արհամարհոտ հեգնութիւններով : Չարմանալի է սակայն որ սիրուած երիտասարդ-հրապարակագիր մը, Տիար Պարոյր Բ. Քէչեան , որուն մէկ յօդուածէն կը քաղենք Մր. Ուանկի բանախօսութեան վերաբերեալ մասը , պէտք զգացեր է Կոմիւնիկոսի վարդապետութիւնը կամ Ճարտնի Շինթոյականութիւնը պաշտպանել չինացի հմուտ բանախօսին կարծիքներուն դէմ : Մինք կը կարծենք սակայն թէ Մր. Ուանկ , այդ հմուտ Չինացին , Հայ հրապարակագրէն աւելի անդեակ է Կոմիւնիկոսին եւ իր վարդապետութեան , զոր Աստուածամարդուն փրկարար սկզբունքներուն հետ բաղդաւանելէ ետքը գիտակցաբար ընդգրկած է Նազովրեցիին կրօնը :



Թերթիս տնօրէն խմբագիրը , պատահական առթիւ մը բարեբախտութիւնն ունեցաւ անսակցելու հոյագէտ համակրելի Տ. Եօաքիմ սարկաւագի հետ : Փոխադարձ սիրալիր , համակրական խօսքեր՝ առաջնորդեցին խօսակիցները , անգրագանալաւ երկու Ուղղափառ Եկեղեցիներուն միջեւ համերաշխութեան եւ միութեան պէտքին վրայ , որուն հոսանքով փափաքող մ'է Տ. Եօաքիմ սարկաւագ , համամիտ դտնուելով Յոյն եկեղեցականութեան եւ աշխարհականութեան ստուար մեծամասնութեան Թերթիս խմբագիրը , քրիստոնէական սիրոյ եւ եղբայրական համերաշխ յարաբերութեան մեծ օգտակարութիւնն ընդունելով հանդերձ , փութաց անկաշկանդ յայտնել իր համոզումը թէ Յոյն Եկեղեցւոյ հետ վերջնական միութիւն մը օգտակար չի նկատեր Հայոց անսահեղատով , ոչ միայն որովհետեւ ճշդուած չեն առկաին այն փոխադարձ զիջողութիւնները , որոնց վրայ կը խօսէր Շ. Գարահիսարի Մեղրապոլիտ Տ. Պօղիկարպոս ,—եւ որոնց յայտնուելուն կը սպասենք ակնդէտ ,—այլեւ որովհետեւ կովկասահայ մեր եղբայրներուն բացարձակ զաւանակցութիւնը Օրթոօքս Եկեղեցիին հետ , կրնայ վտանգել Հայ Եկեղեցիին ինքնուրոյն դոյութիւնը : Տ. Եօաքիմ սարկաւագ այդպիսի վտանգ չի տեսներ բնաւ . անպայման կ'ընդունի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան , Կիլիկիոյ Կաթողիկոսութեան , Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Պատրիարքութիւններու գոյութիւնը , իրենց բոլոր իրաւասութիւններով , ինչպէս կան՝ կ'ըսէ՝ Անտիոքի, Աղեքսանդրիոյ Յոյն տնջաւ Պատրիարքութիւնները , Աթէնքի եկեղեցին , Լաւայն : Եւ եթէ , կ'աւելցնէ , ըստ Օրթոօքս Եկեղեցւոյ միեւնոյն քաղաքին մէջ երկու դաւանակից Պատրիարքներու կամ Առաջնորդներու գոյութիւնն ընդունելի չգտաւի , դուք Հայերդ կրնաք

պատասխանել թէ «Ետ կանչեցէք, վեր-
ցուցէ՛ք Հայաստանի մէջ դսնուող Յոյն
մեղրապոլիտները, եւ մենք նոյնը պիտի
ընենք մեր առաջնորդներուն եւայլն հա-
մար ւ» Եռանդուն սարկաւազին յայտարա-
րութիւնները չկրցան համոզել զմեզ, ի նկատ
առնելով Թուրքիոյ մէջ եւ մանաւանդ
Թուրքիայէն դուրս ազգային գերադոյն
չաները, ի նկատ առնելով մանաւանդ այն
աններող ոգին, զոր՝ այս կարգի սիրալիր
խօսքերու հակառակ՝ տակաւին ցոյց կու-
տան շատ յոյն եկեղեցականներ(1)։ Ատոր
վերջին արտայայտութիւնն էր Սինօզին
որոշումը՝ մահամերձ Հայ զինուորները
չհաղորդելու, այլ շատ շատ օրհնեալ ջուր
տալու մասին, որուն համամիտ չտեսանք
Տ. Եօսեփի սարկաւազը, եւ որուն համա-
միտ չեն նոյն իսկ Յոյն թերթերը՝ ի մէջ
այլոց *Fraser*, որ արձագանգ ըլլալով
Հայ մամուլին այս առթիւ յայտնած ցա-
ւին, կը հրաւիրէ Սինօզը՝ գոհացուցիչ լու-
ծումը տալ խնդրոյն, ի նկատ առնելով բե-
կու կողման սիրալիր յարաբերութիւնները։
Յուսանք որ Պատրիարքական Փոխանորդ Ս.
Հօր թեկադրութեան համաձայն բացասիկ
կարգադրութիւն մը կ'ըլլայ Հայ զինուոր-
ներուն մասին, երբ Սինօզը վերստին ի
նկատ առնէ խնդիրը։

Յ Ո Ւ Զ Ո Ւ Մ Ը

ՀԱՅ-ՀՈՒՄԷԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայ-հոումէական հասարակութիւնը
տաքնապի մէջ է այս միջոցին։ Պատրիարք
Թէրզեան Եպիսկ. որ Հոռոմ գայած էր,
«Յոռոմ Գահոյից Պապին մատուցանելու իր
հաւատարմական եւ անձնուիրական զգա-

ցումները», եւ որուն Հայ Եկեղեցւոյ հան-
դէպ տակաւին վերջին ժամանակներս
բռնած անճաշ ընթացքն այնքան վիշտ
պատճառած էր հայ ժողովուրդին, եւ յա-
րաբերութեանց ձկտեալ վիճակի մը շար-
ժառիթ եղած, Հոռոմէն Պատր. Փոխանորդ
Ճամճեան Նախկին ուղղուած կրկին գրե-
րով պահանջած է լուծել «Ազգ. Ժողով
ըստածը»։ Ճամճեան Եպիսկ.՝ Թէրզեան
Պատրիարքի առաջին ամսականի մէջ ըրած այդ
հակազգային պահանջումին գոհացում տալ
չկրնալով կրօն. Ժողովին ենթարկել, եւ
այն ալ մերժել էր։ Թէրզեան Եպիսկ.,
այս մերժումին վրայ գրգռուած՝ երկրորդ
եւ շատ կծու գիր մը ուղղած է Փոխա-
նորդին, պահանջելով իսկոյն լուծել ժո-
ղովը եւ չնախադասել նիստերուն։ Եւ
ժողովրդային կամքին ու ձայնին դէմ իր
ատելութիւնն այնքան առաջ տարած է
որ, այդ նամակին մէջ համարձակած է
գրել որ եթէ այս արգելքին դէմ դաւա-
նափոխներալ գտնուին, «հոգ չէ թող եր-
թան, եւ մաքուր կաթոլիկները միայն
մնան»։ Թէրզեան Եպի. նամակին հետ
հաղորդուած է նաեւ Վատիկանի արտա-
քին գործոց քարտուղար կարդինալ Մէրի
տէլ Վալի մէկ հեռագիրը, որով կը հրա-
մայէ՝ Պապին անունով՝ չնախադասել
Երեսփ. Ժողովոյ նիստերուն։ Բօրքական
տալի նախագահ կարդինալ Կօթիէէն եւս
գիր մը եկած է որով կը պատուիրուի
խապառ հրաժարիլ՝ Հայ-հոումէական հա-
սարակութեան համար նոր պահանջում-
ներու համաձայն եւ ազատական ոգիով
պատրաստուած նոր կանոնադրէն։ Այս
ամէնէն կը տեսնուի թէ Հայ-հոումէական
հասարակութիւնը չարաչար խաբուած է
իրեն Պատրիարք ընտրելով Թէրզեան
Եպ.՝ որ Հոռոմ մէջ իր գործունէու-
թեամբ հանգիստացած է Գոյունեանի եր-
կրորդ տպագրութիւն մը, արհամարհելով
հասարակութեան իղձերն ու վարչային
կազմակերպութեան ջանքերը։

Ազգ. Ժողովն անցեալ ուրբաթ օր
դումարուելով ունկնդրեց եկած կրկին
նամակներուն, որոնցմով Թէրզեան կ'ուրա-
նայ ժողովին բոլոր իրաւասութիւնները,

(1) Այստեղ չենք ուզեր անդրադառնալ մեր
Ազգային Եկեղեցական Պատմութեան էջերուն, որոնք
տիտուր արձագանգը կը բերեն մեզի Յոյն Եկեղեց-
ւոյ աններող ոգւոյն, և Հայ Եկեղեցւոյ կրած հա-
լածանքներուն։ Քաղկեդոնի ժողովէն ի վեր, որուն
Հայոց կողմէ ճանաչումը, և իբր Թէ Քրիստոնէական
Միութեան և եղբայրակցութեան հրաւերները, շոգ-
շողուն բայց շատ Թափանցիկ բող մը եղած են
Յոյն կամ Հոռոմէական Եկեղեցւոյ պետերուն գերա-
զանքեան փառատենչիկ իղձը փարագուրելու։

եւ բացարձակ կը հրամայէ բոլոր եկեղեցի-
անդամներուն՝ չմասնակցել ժողովի մը,
սը «նուիրապետութեան հակառակ որոշու-
մներ կը վճռէ, Հոռոմի չի հպատակիր,
ծանր եւ փափուկ խնդիրներու մէջ յա-
խուռն որոշումներ կուտայ»։ Եւ անշուշտ
գուշակելով որ իր պահանջումները ամե-
նաբուն յուզում յառաջ պիտի բերեն,
կը գոչէ. «Դիմադրեցէ՛ք բոլոր հալա-
ծանքներուն, ըրէք ամէն զոհողութիւն»։
Աստուծոյ եւ ազգին առջեւ պատասխա-
նատու էք»։

Ժողովը սաստիկ զայրոյթով ունկնդ-
րեց այս գրութիւններուն, եւ հակառակ
Ճամճեան Նպիսկի ստաշարկին՝ թէ առ-
ժամապէս յիսաձգուի կանոնադրին քննու-
թիւնը, եւ երկու երեք նիստ չգումարելու
զոհողութեամբ մը սպասուի թէրդեանի
վերադարձին, որպէս զի աշխատութիւն հա-
մոզել զինքը եւ բառնալ թիւրիմացու-
թիւնները, ատենապետ Երամ էֆ. յայ-
տարարեց թէ հասարակութեան համար
մահու եւ կենաց խնդիր է այս, եւ բոլոր
երեսփոխանք միաձայնութեամբ եւ ծա-
փահարութեամբ որոշեցին թողոքելով մեր-
ժեղ Թեոքեանի նախաձեռնութեան ու պա-
հանջումները։ Ճամճեան Նպիսկ. եւ միւս
եկեղեց. երեսփոխանները արդէն մեկնած
էին ժողովարանէն, յայտնելով որ իրենք
պարտաւոր են ըստ օրինի հպատակել վե-
րին հոգեւոր իշխանութեան հրամանին։
Չանազան առաջարկներ եղան խնդրոյն
նպաստաւոր ելք մը տալու համար, ինչ-
պէս յիշատակագիր մը հանել, պապական
նուիրակին դիմել, ուղղակի Պապին նա-
մակ մը գրելով պարզել իրողութիւնները
մանրամասնօրէն։ Առաջարկ եղաւ նոյն
իսկ դատական նախարարութեան մօտ
դիմում ընելով թէրդեանի պաշտօնակու-
թիւնը պահանջել։ Հուսկ ուրեմն ժողովը
որոշեց ըստ առաջնոյն նիստերը չարժեքակել
կաթողիկոսարանի մէջ, անփոփոխ պահել
դիւանը։ Յաջորդ նիստը պիտի գումար-
ուէր Դշ. իրիկուն (Տեսէք վերջին էջը)։

Հետաքրքրութեամբ կը սպասուի տագ-
նապին ելքին։ Իրապէս շատ տարօրինակ
է Հոգեւոր Պետի մը խրոխտ արհամար-
հանքը՝ ժողովորդային ձայնին, եւ այս՝
այնպիսի ատեն մը երբ ժողովուրդին
կամքը գերակշիռ հռչակուած է ազատ
Թուրքիոյ մէջ։

ԿԱՐԵՒՈՐ ՍՈՒԱՑՈՒՄ ՄԸ

Տարւոյս Արեւելեան Որբանոցի ընդարձակ
Համալգային Օրացոյցի մէկ կէտին համար
քանի մը խօսք։

Բաց նամակ

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ

Ազնիւ Տիար,

Նպատակս Ձեր Օրացոյցը քննափնտել
չէ բնաւ, քանի որ ձեր հայեցակէտը բարի
է. միայն թէ թղթատած ատենս, անոր
258-259 էջին «Բնակիչք աշխարհի» մասը
ուշադրութիւնս գրաւեց ու բաւական
խորհեցուց զիս, թէ ի՞նչպէս Ձեզ նման
Հայ մը՝ իրեն ազգակից Հայ Առաքելա-
կան Եկեղեցւոյ պատկանող Հայութիւնը
չի դնէր աշխարհի բնակչութեան թիւին
մէջ։

Գրեթէ բոլոր դաւանութիւնները կը
յիշէք իրենց քանակովը։ Միթէ Հայուն
փոքրահօտ ըլլալն է պատճառը չյիշուե-
լուն, թէ ո՛չ այս կամ այն անձին մոլե-
ռանդ եւ կոյր հակաիրութիւնը։ Ամէն
պարագայի մէջ քանի որ ուրոյն Եկեղեցի
մը կը կազմենք, քիչ-ոք ըլլալով հանդերձ
պէտք էր յիշուիլ, եւ «մնացեալը հեթա-
նոս»ով վերջանալու չէր։

Ներկայ չըջանին ամենուստ ջանքիւր
կը տեսնուին Հայութեան բաժանեալ հատ-
ուածներու միացումին, կամ գոնէ անի-
մաստ հակառակութեանց վերջ տրուելուն
համար։ Յաւ է մեզ ըսել թէ՛ այսպիսի
ընթացքներ չեն նպաստեր բաղձացուած
համերաշխութեան։ Ուստի կը յուսանք որ
այսուհետեւ ամէն դաւանութեան տէր
Հայեր ձեռք ձեռքի տալով, իբր մէկ աշ-
գի դաւակ. ազգին ծով ցուերուն դար-
մանը կը խորհին։

Սունկոտչու

Աղօթարար

ԵՂԻՇԷ ԲԶՆԵ. ՅԱՐԱՍԱՐԵԱՆԻ

Ծ. ԽՄԲ. — Կը գովենք նումակագիր Տէր
Հօր նախանձախնդրութիւնը. բայց կը սիրենք հա-
ւատալ Թէ մատնանշած Թերին պարզ մոռացման մը.
լաւ եւս գրաշարական վրիպակի մը արդիւնք է
և բնաւ հետեւանք չէ մասնաւոր դիտումի մը։

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՎԵՂԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ



* ԳԱՂԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՎԵՆ. Կայսեր դահակալութեան տարե-
դարձին առթիւ Ազգ. Պատրիարքարանը
փակ էր անցեալ Եջ. օր: Նոյն առթիւ
փակ կը մնային նաեւ Ազգ. վարժարան-
ները: Գիշերը Ազգ. Պատրիարքարանը լու-
սազարդուեցաւ լապտերներով եւ դրօշակ-
ներով: Տեղապահ Ս. քաջեղու հիւրերն
ընդունեց եւ պատուասիրեց:

Նոյն օրը Տեղապահ Ս. քաջեղու գործակատար
Գառնէր էֆ. Կեա Տօլմա Պաղչէի Կայս.
Պալատը գնաց ի շնորհաւորութիւն, եւ միւս
Հոգեւոր Պետերուն հետ Կայսեր ներկա-
յութեան ընդունուեցաւ: Յունաց Պատ-
րիարքն ըստ սովորութեան կարգաց շնոր-
հաւորական ուղերձը, եւ ՎԵՆ. Կայսրը
շնորհակալութիւն յայտնեց Հոգեւոր
Պետերուն ըրած մաղթանքներուն հա-
մար Պալատին սպասման սրահին մէջ,
Տեղապահ Ս. քաջեղու ունեցաւ տեսակցե-
լու Հայ-հռոմէականաց Պատր. փոխանորդ
Ճամճեան Եպիսկ. Կեա, որցաւ յայտնեց եր-
կու Պատրիարքարաններու ձգտեալ վի-
ճակին համար: Տեղապահ Ս. քաջեղու
յայտնեց թէ Հայք պատասխանատու չեն
ասոր մէջ, քանի որ առիթը տրուած է
Հայ-հռոմէականաց Պատրիարքարանին
կողմէ, որուն ընթացքը ցաւ պատճառած է
Ազգին:

* ՎԵՆ. Կայսրը իր զահակալութեան
տարեդարձին առթիւ ներում շնորհեց 217
բանտարկեալներու որոնք Ատանայի եւ
Հալէպի պատերազմական ատեաններուն
կողմէ դատապարտուած էին:

ՅՈՒՆԱՅ Տ. ԵՕԱՔԻՄ ՊԱՏՐԻԱՐԷՆ

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆԻ ՄԷՋ

Տաճար մամուլ տակ էր արդէն, երբ
անցեալ ուրբաթ օր Ազգ. Պատրիարքա-
րան եկաւ (մէկ ամսուան մէջ երկրորդ
անգամ ըլլալով) Յունաց Տ. քաջեղու Ս.
Պատրիարքը, ընկերակցութեամբ Մար-

մարայի եւ Ատանայի մեղրապոլիտներուն,
հայագէտ Տ. Եօաքիմ սարկաւազին, եր-
կու աշխարհական ժողովականներու, եւ
գործակատար Էքիատիա էֆ. ի Տեղապահ
Ս. քաջեղու ունենալով Տ. Մաղաքիա եպ.
Տէրունեանը, Պոլսոյ եւ Երուսաղէմի
Պատր. փոխանորդները, վարդապետներ
եւ քահանաներ. արժանաւայել մեծարանօք
ընդունեց Տ. քաջեղու Ս. քաջեղու Տեսակցու-
թիւնը որ կէս ժամու չափ տեւեց, շատ
սիրալիր՝ եղաւ: Տ. քաջեղու Պատրիարք
ըսած ըլլալով թէ նախորդ Պատրիարք Տ.
Եգիշէ Արքեպ. Դաւթեան հաւանական ընտ-
րելի կը նկատուի Ամենայն Հայոց Կաթո-
ղիկոսութեան, Մանկունի Ս. պատա-
խանեց թէ Դուրեան Ս. իր բարձր արժա-
նիքով եւ անբասիր կեանքով արժանի
է այդ բարձրագոյն աստիճանին հասնելու,
բայց ընտրական գործողութիւններն սկս-
ուած չըլլալով, կարելի չէ այժմէն բան
մ'ըսել: Յետոյ խօսք դարձաւ օր մը առաջ,
ՎԵՆ. Կայսեր դահակալութեան տարե-
դարձին առթիւ Կայս. Պալատին մէջ կա-
տարուած ընդունելութեան վրայ, որու
միջոցին դրան մօտ մնացիւր էին Հոգեւոր
Պետերը: Տ. քաջեղու Պատրիարք ըսաւ
թէ աննպաստ տպաւորութիւն կրած է,
եւ կարծիք յայտնեց թէ Հոգեւոր Պետերուն՝
իրենց գիրքին համամատ կարգադրութիւն
մը պէտք է պահանջել կառավարութիւնէն:
Այդ հանգամանքը ունին միայն Յունաց,
Հայոց, Հայ-հռոմէականաց պատրիարք-
ները, եւ Պուլկարաց Եկզարքը: Ասոնցմէ
զատ ուրիշ վարդապետներ եւ քահանա-
ներ իբրեւ Հոգեւոր Պետ կը ներկայանան,
մինչդեռ չունին այդ իրաւունքը:

Ի վերջոյ խօսակցութիւնը դարձաւ
զաւառներու Հայոց վիճակին, զինուորա-
կան խնդրոց (Վուլիմի, սարիքի սրբազրու-
թեան) եւն. վրայ, որոնց մասին Տեղա-
պահ Ս. Հօր տուած տեղեկութեան ի
պատասխան, Տ. քաջեղու Պատրիարք ըսաւ
թէ ամենազգի երեսփոխաններէ կազմուած
յանձնաժողով մը յարաբերական խնդրոց
քննութեամբ կը զբաղի, եւ երբ աւարտի
կըլծական խնդրոյն վրայ կատարուած
խորհրդակցութիւնը, զինուորազրու-
թեան

խնդիրը ի նկատ պիտի առնուի: Խօսուեցաւ նաեւ նահանգային օրէնքին վրայ, որ կը ջնջէ Պատրիարքարաններու իրաւունքները, նոյն իսկ ժառանգական, առուծախի իրնախապէսներ տալու իրաւունքն յանձնելով Իխրիյար մեհնիսինբուռն, որոնք կարող եւ ձեռնհաս չեն այս քննութիւնները կատարելու: Հայոց Պատրիարքարանն Հայ երեսփոխանաց ուշադրութեան պիտի յանձնէ այս խնդիրը: Յունաց Պատրիարքարանն ալ պէտք է Յոյն երեսփոխաններուն իմացնէ, որպէսզի երբ օրինագիծը քննուի Երեսփ. Ժողովին մէջ, բացատրեն թէ նոյն իսկ կառավարութեան շահերուն համաձայն չէ: Տ. Սօաքիմ Պատրիարք համամիտ գտնուեցաւ ասոր, եւ ցաւ յայտնեց որ կառավարութիւնը թիւրիմացութեամբ մը Հոգեւոր Պետերը կ'ուզէ սահմանափակել իրենց եկեղեցական հանգամանքն մէջ, մոռնալով անոնց վարչական դերը: Փոխադարձ համերաշխութեան խօսքերէ ետքը, Տ. Սօաքիմ Պատրիարք մեկնեցաւ միեւնոյն պատիւներով:

ԵԴԻՊՏՈՍԻՆ հասած տեղեկութիւններ ուրախառիթ լուր մը կը բերեն: Եգիպտական կառավարութիւնը չէր ճանչնար Ազգ. Սահմանադրութիւնը, տեղւոյն Ազգ. գործոց վարչութեան համար: Նոյնպէս չէր ճանչցած Հանգ. Իզմիրլեան կաթողիկոսի՝ իր առաջնորդութեան օրով պատրաստած կանոնագիրը, եւ Առաջնորդը՝ իր պաշտօնը վաւերացնող փերմանին ուժով միակ ներկայացուչիչը կը մնար ազգին: Այս վիճակը նպաստաւոր չէր բնաւ ազգային շահերու համար. ուստի յատուկ կանոնագրի մը պատրաստութեան վրայ կը խորհուէր. բայց ի վերջոյ մտածուելով որ Եգիպտոս քաղաքականապէս անկախ երկիր մը չէ եւ Օսմ. գերիշխանութեան տակ կը գտնուի, ուստի իրաւունք չկայ յատուկ կանոնագրի պատրաստութեան եւ Ազգ. Սահմանադրութիւնը պէտք է գործադրուի, առանց վաւերացման իսկ պէտք տեսնուելու: Աղիքսանդրիոյ եւ Գահիրէի Գաւառ. Ժողովներու Ատենապետները, Արթին պէյ

Ռէիզեան եւ Պօղոս Նուպար փաշա ժամուկէս տեւող տեսակցութեան մը մէջ այս տեսակէտը բացատրեց եւ Խորվական ջօրէնս, զրական խորհրդական Պ. Րօքքա Սէրայի, որ բաւական վիճարանելէ ետքը իրաւունք տուած է Եգիպտոսիոյ, եւ որոշուած է որ Եգիպտական կառավարութիւնը ճանչնայ Ազգ. սահմանադրութիւնը իրեն եւ զիպսանայոց Ազգ. օրէնք: Ձեռք բերուած այս արդիւնքը արժանապէս գնահատուած է Գահիրէի Գաւառ. Ժողովէն, եւ ընդհ. Եգիպտահայերէն: Ասով առաւել եւս կը բարձրանայ Ազգային Սահմանադրութեան յարգը:

ՅԱՐԱՅԻՆԻՄ ՀԱՅ ԳԻՒՂԻ ՄԸ ՎՐԱՅ.

— Խարբերէն Տ. Պօղոս քհ. եւ Բողոքականաց պատուելի Ասատուր էֆ. Ապրիլ 19 թուականով հետեւեալ ծանրակշիռ հեռագիրը ղրկած են Պատրիարքարան. — «Կայս. Գահակալութեան տարեգարձին օրը ժողովրդեան կողմէ ուրախութիւն կատարուած միջոցին կէօտէրիզ զիւղի բոլոր աղաները նոյն օրը իրենց սպասուողներով սոսկալի ու մեծ խումբ մը կազմելով, յարձակած են նոյն գիւղի Հայերուն վրայ, եւ զանոնք իրենց միակ ապաստանարանը եղող տուններէն դուրս վանտելով քարերով, բիրերով, բահերով եւ շիշերով, ասոնցմէ մեծ մասը վիրաւորած են. բաւական թիւով ծանր վիրաւորուածներ կան, որոնց կեանքը վտանգի տակ է: Այս ոճիրը գործող աղաները եթէ օրինական պատիժներու չենթարկուին, միւս գիւղերու աղաներն ալ խրախուսուելով, պիտի հետեւին տնոնց օրինակին: Բռնապետութեան անձնուէր ժառանգորդներուն լուծին տակ ճնշուած այս զժբաղղ ժողովուրդին ազատութիւնը, յանուն սահմանադրութեան եւ ազատութեան կը խնդրենք կառավարութեան»

Ընդհ. գաւառներու անապահով վիճակին(1) մէկ տիւրը զրուագն է ասիկա, ծանր

(1) Ընդհանուր գաւառներու, կ'ըսենք, որովհետեւ զժբաղղ իրողութիւնն է այդ: Տակաւին առջի օր Բաղէշի Նէման գիւղէն հեռագիր տրուած

Թշնամանք մը Սահմանադրական Թուրքիոյ կառավարութեան, ու ազատութեան եւ եղբայրութեան սկզբունքներուն, որոնք միտեալ տալ կը մնան զժգարտաբար Մեր բարեփոխ եւ սիրելի Վեհապետին գահակալութեան տարեգարծի օրը Հայութեան սիրտը կարելի էր խոցող այս կարգի խժգժութիւններ անպատիժ պէտք չէ մնան: Այլ բաւական է որքան քաջալերուեցան գաւառի այդ վայրագ բռնակալները, մանրանկար Համիտները:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՐ ԴՆ. օր գումարուելով, առօրեայ խնդիրներ ինկատ առնելէ ետքը, որոշեց հրաժարական մատուցանել Ազգ. Ժողովին զոր այս ուրաթ (երէկ) գումարել որոշուած էր, բայց Մայր Դիւանի կարգադրութեամբ այս նիստը յետաձգուեցաւ, պակասեալ երեսփոխաններու ընտրութիւնը մեծագոյն մաստմբ ամբողջացուելու համար:

Ս Գ Ա Շ Ա Ն Ե Է Ս

Պէրպէրեան վարժարանի նախկին սաներէն կազմուած յանձնախումբ մը փափաքելով յարգանքի հանդիսաւոր արտայայտութիւն մ'ընել ողբացեալ ուսուցչապետ եւ զրազէս ՌեթիՈՍ Յ. ՊէրՊէրեանի, հրաւիրած է Տ. Յովհ. Արքեպ. Արշարունին վաղը, կիրակի 24 ապրիլ, պատարագել Սկիւտարի Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ: Հոգեհանգստեան պաշտամունքէն ետքը ներկաներէն կազմուած թափօր մը պիտի այցելէ դաստիարակին հողակոյտին, Պաղլար Պաշրի գերեզմանատունը, ուր ծաղկեպսակներ պիտի դերեզմանին վրայ, ուղերձ մը պիտի կարդացուի ի դիմաց ներկայ ուսանողութեան, եւ պիտի խօսի Թէոդիկ' ի դիմաց նախկին սաներու: Կէս օրէն յետոյ ժամ 3ին Յա-

Պատրիարքարան Թէ տեղոյն մէջ բռնապետ անձեր ժողովրդեան վրայ ծանրացած են, և այլեւս անտանելի դարձած է կեանքը այդ կողմերը: Իսլահիէի մասըլլը գիւղէն ալ կը գրեն Թէ տեղոյն մէջ գտնուող և կոտորածի հեղինակ Թուրքեր վերջերս ոկսած են իլրտուսներ հանել: 25 մոռցուած նաև Անտիոքի կոտորածէն փրկուած այրի կիներու անցեալները ենթարկուած ան ու զողը:

ռաջդիմասէր Միութեան լսարանին մէջ տեղի պիտի ունենայ Սգահանդէս մը, նախագահութեամբ Դուրեան Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպ. ի, եւ պիտի խօսին Ս. Նախագահը, Բրօֆ. Աբրահամ Տ. Յակոբեան, Յ. Հինդլեան, Տ. Զրաքեան, եւն: Մեծանուն գրադէտ-դաստիարակին յիշատակն յարգողներ կը հրաւիրուին այս հանդէսին: Ղրկուած հրաւիրապետը իբր մտից տամ պիտի ծառայեն մէկ անձի համար:

ՏԱԳՆԱՊԸ ՀԱՅ ՀՈՌՄԷԱԿԱՆԱՅ ՄԷՉ

Հայ-հոռմէականաց Երեսփ. Ժողովը ԴՆ. իրիկուն ալ յուզումնալից նիստ մը ունեցաւ, ելք մը գտնելու համար Թէրզեան Պատրիարքի երկու հրամանագիր-նամակներուն, որոնց վրայ գրած ենք թիչ մը անդին: Ծամճեան Եպ. եւ Նկեղց. երեսփոխանները կը բացակայէին նիստէն: Թէրզեանի հրահանգին համաձայն Երեսփոխանները ամէնէն բուն բառերով որակեցին Թէրզեան Պատրիարքի արարքը: «Պէտք է ստիպենք Պատրիարքը, որ իր խօսքը ետ առնէ. մենք 60000 կաթ ուղիկներու ներկայացուցիչներն ենք» կը զոչէր Կիւմուշեան Էֆ. Տ. Երգ. Յովհաննէսեան Էֆ. կը յայտարարէր թէ «Թէրզեան մեզ կը մերժէ, մեզմէ ընտրուեցաւ, ուրիմ մենք ալ պաշտօնսնկ կընենք զայն»: «Թէրզեան որով ցանկց մեր միջեւ ու ազգին դաւաճանեց» կը զոչէր Ինճիճեան Էֆ. Իսկ Տ. Երգ. Զօհրապ Էֆ. բժշկական օրէնքով «խելադար» նկատեց Պատրիարքը, Թեր ու զէմ վիճարանութիւններէ ետքը, հուսկ ուրիմն յանձնախումբ մը կազմուեցաւ, որ պէս զի ճշդէ ժողովին Թէրզեանի դէմ բռնելիք ուղղութիւնը: Այս յանձնախումբը հեռագրով Թէրզեանի պիտի յայտնէ թէ ժողովը կը մերժէ իր գրութիւնները, եւ մասնաւոր յայտարարութեամբ մը ժողովուրդին պիտի ծանուցուի իրենց բռնած ուղղութիւնը:

Արտօնատէր ՀՄԱՅՆԱԿ ԲՆՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԿԻՐ
ՀՄՐՄԱՅՐ ԲՆՆՅ. ԿԵՂԻԲԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆ ՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրուց
Արասահմանի համար	» 10 միանգ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 soլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆ ՈՐԴԱԴՐՈՒՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

« ՏԱՃԱՐ » ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է զինել առ Ջարմայր Քանանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեթիքաւ, Հայոց Եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسا سنده « داجار » غرضتى مديرى پاپاس زارماير افندي

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԷՔ

« ՏԱՃԱՐ » ԿՐԾՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Քհնյ. Դերձակեան

ԱՂԵՔՍՍՆԴՐԻԱ. — Տ. Ռուբէն Քհնյ. Դա-
րիկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Դափթանեան

ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեգլին Քհնյ. Պողար-
եան

ԱՅԻԾՆ ԴԱՐԱՀԻՍՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Քհնյ. Տօնէլեան

ԲԱՔԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.

ԴԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ Բարգէն Եպո.
Կիւլէսէրեան

ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Քհնյ. Սար-
գիսեան

ԵՕՂԱՍ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքսեան

ԵՐՁՆԿԱ. — Տ. Մեարոպ Քհնյ. Թորոսեան

ՉՄԻՒՈՆԻԱ. — Տ. Յարութիւն Քհնյ. Տ.
Սարգսեան

ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Դալուստ Քհնյ. Տ.
Դալուստեան

ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սաատէթեան

ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թոքապեան

ԿԻԻՄԻԼԻՃԻՆԷ. — Տ. Ներսէս Քհնյ.
Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Քհնյ. Վարժ-
պետեան

ՄԱՐՁՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան

ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Քհնյ. Պիպիեան

Շ. ԴԱՐԱՀԻՍՍԱՐ. — Տ. Նաթան Քհնյ.
Տատեան

ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Քէհեանեան

ՊԱՆՏՐՄԱ. ՊԱԼԼՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մազլըմեան

ՊԱՂՏԱՍ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպիսկ. Կէօմրիւքճեան

ՌՈՒՍՉՈՒՐ. — Տ. Մկրտիչ Քհնյ. Մըրջ-
նիկեան

ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Ասլանեան

ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաշեան

ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Քհնյ Օտապաշեան.

ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Քհնյ. Թուխմանեան

ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Քհնյ. Տրէզ-
եան

ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան

ՏԻՄԷԹՕԴԱ. — Տ. Գէորգ Քհնյ. Թէրդեան

ՓԱՐԻՉ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառմշա-
պուհ Քհնյ. Քիպարեան

ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.

ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Քհնյ. Դերձակեան

ՖՐԷՉՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան

ՄՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՈՍՏԱՆ, Եռանկայ մեծ պարբերագիր.
— Հրատարակուեցաւ Բ. Թիւր, (1 Ապ-
րիլ 1911).— Ժամագրավայր մը հայ եւ
օտարազգի լաւագոյն գրողներու : Այս Թի-
ւին մէջ կը սկսի հայ գրական եւ գեղա-
րուեստական կեանքի, եւ միջազգային
մտաւորական կեանքի տեղեկութեանց ճոխ
բաժինը : Տարեկան բաժնեգին 40 դրշ. :
Հատը 12 դրշ. : Հասցէ՝ Օ. Արդուման Տը-
պարան, Չագմագճըլար, Յակոբեան խան :
ՅԻՇՍՏԱԿԱՐԱՆ.— Հայ երեւելիներու
կենսագրութիւնները, լուսանկարները, ձե-
ռագիրները, եւ այլն : Կազմեց Վ. Գ. Զար-
դարեան. հրատարակուեցաւ Ի. Պրակը (Բ.
հատոր).— Գին 2 դրշ. :

ԲԺԻՇԿ.— Բժշկական եւ առողջապա-
հական ամսաթերթ. տէր եւ տնօրէն Տֆդ.
Վանան Դազարեան, Տրապզօն : Հրատա-
րակուեցաւ Գ. Թիւր (Մարտ), օգտաշատ
եւ ճոխ բովանդակութեամբ : Տարեկան
բաժնեգին 20 դրշ., կամ 5 փր. : Մէկ Թիւր
2 դրշ. :

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ. — Հայա-
գիտական ուսումնաթերթ, խմբագրու-
թեամբ Վիեննայի Միթթարեանց : Հրա-
տարակուեցաւ Ապրիլ-Մայիս միացեալ Թիւր
Տարեկան բաժնեգին 13 ֆր. : Հասցէ՝ Vienne
(Autriche) VII/2 Mechitharistengasse, 4 :

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԱՊՍՅՈՅՅՆԵՐ.

— Հ. Հ. Րիկզի. — Թարգմ. Սողոմոն Կ.
Ռահանեան. — Հրատարակութիւն Կրօ-
նասիրաց միութեան Երզնկայի : Տպագր.
Յ. Մատթէոսեան, Գին 5 ու կէս դրշ. :

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՀԵՌԼԵԱՆ

ԱՍԱՄԵԱԲՈՅԺ

(Վկայեալ Կայսերական բժշկական վարժարանն եւ
պատուակալ ասամնաբոյժ Լրստեր սպայից
վարժարանին)

Պեշիքաւ, Հայոց Եկեղեցիին ճիւղ դիմացը :

Կը դարմանէ ականջի եւ լինտերու
ամէն տեսակ հիւանդութիւններ. կը չինէ
քնականին յար եւ նման ականներ քառ-
ջուի կամ ոսկի փրափ վրայ : Չափէն ա-
ւելի փտած ականները քուռօնէ կ'ընէ. կը
չինէ նաեւ dent à pont ամբողջ ոսկիէ
կամ քոռարդեան :

Հիւանդ կ'ընդունի Դշ. եւ Ուր. օրերը
առաւօտէն մինչեւ երեկոյ. ուրիշ օրեր ի-
րիկուն ժամը 12էն մինչեւ 3 (Ը. Թ.) :
Ատկէ դուրս մասնաւոր ժամագրութիւն :
Կիրակի օրերը մինչեւ կէս օր ձրի :